ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

27 հունիսի շաբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

83
(3292)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՍՏԱՑԵԼ Է ԸՆԴԱՄԵՆԸ 5 ՁԱՅՆ

«Ժողովուրդ» օրաթերթի իշխանական աղբյուրների փոխանցմամբ՝ երեկ երեկոյան կայացած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության դռնփակ նիստում Ալեն Սիմոնյանը ստացել է 20 հոգանոց վարչության ընդամենը 5 կողմ ձայները: Թեեւ վերջին օրերին ՔՊ-ի ներսում ակտիվորեն Ալեն Սիմոնյանի կողմից տարածվում էին տեղեկություններ, թե Նիկոլ Փաշինյանի «դաբրոն» կա, եւ անխուսափելիորեն կրկին Սիմոնյանը կընտրվի ԱԺ նախագահի թեկնածու, այնուամենայնիվ, իշխանական կուսակցության ներսում տեղի ունեցած զարգացումները բոլորովին այլ պատկեր են ցույց տալիս: Երեկ կայացած վարչության նիստում առաջադրված թեկնածուների մասին քննարկումների առանցքային թեման եղել է ընտրության դեպքում ՔՊ-ի անխոցելիությունը եւ այդ համատեքստում է դիտարկվել Ռուբեն Ռուբինյանի թեկնածությունը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ գործող ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը ստացել է ընդամենը 5 կողմ ձայն, ինչը կուսակցության ղեկավար մարմնի ներսում նրա աջակցության էական նվազման մասին է վկայում: Նույն աղբյուրների փոխանցմամբ՝ ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը նույնպես առաջադրված թեկնածուներից է եղել, սակայն ստացել է զգալիորեն ավելի քիչ ձայն: Իսկ վարչության 20 անդամներից կեսից ավելիի աջակցությունը ստացել է փոխխոսնակ Ռուբեն Ռուբինյանը, որն այս փուլում դարձել է ՔՊ-ի ներսում ԱԺ նախագահի պաշտոնի գլխավոր հավակնորդը:

Ի դեպ, Ալեն Սիմոնյանը ռեկորդակիր է որպես ԱԺ նախագահ, քանի որ նա խորհրդարանի այն խոսնակն է, որը մի ամբողջական ժամկետ պաշտոնավարեց: Մնացած նախագահների պաշտոնավարումը մշտապես կիսատ է մնացել. կամ սպանվել են, կամ պարզապես հրաժարական ներկայացրել տարբեր հանգամանքներով պայմանավորված:



«Ժողովուրդ» օրաթերթը ԱԺ կայքից պարզեց, որ ՀՀ Ազգային Ժողովի նախագահի որոշմամբ՝ 2026 թվականի հուլիսի 2-ին՝ ժամը 11:00-ին, Կառավարության նախաձեռնությամբ կգումարվի Ազգային Ժողովի արտահերթ նստաշրջան: Այն անցնելու է հատուկ ընթացակարգով, քանի որ օրակարգում ներառված է ավելի քան 40 խոշոր հարց: Կառավարությունն ու իշխանական պատգամավորները որոշել են ամառային տապին զուգահեռ բավականին «տաք» օրակարգ բերել խորհրդարան: Օրակարգային նախագծերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իշխանությունները պատրաստվում են մի շարք առանցքային փոփոխություններ իրականացնել ընտրական, քրեական եւ տնտեսական ոլորտներում: ՔՊ-ական պատգամավորներ Ալխաս Ղազարյանի, Արուսյակ Մանավազյանի, Հասմիկ Հակոբյանի եւ Արուսյակ Ջուլհակյանի հեղինակած նախագծով առաջին եւ երկրորդ ընթերցմամբ քննարկվելու են «Ընտրական օրենսգիրք» եւ «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքներում լրացումներն ու փոփոխությունները:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Ռուսաստանն ու Ուկրաինան հունիսի 26-ին իրականացրել են ռազմագերիների հերթական փոխանակումը՝ «160-ը՝ 160-ի դիմաց» բանաձեւով: Այդ մասին հայտնել է Ռուսաստանի պաշտպանության նախարարությունը: Գերատեսչության հաղորդմամբ՝ ուկրաինական կողմի վերահսկողության տակ գտնվող տարածքից վերադարձվել է 160 ռուս զինծառայող, իսկ փոխարենը Ուկրաինային է փոխանցվել Ուկրաինայի զինված ուժերի 160 ռազմագերի: ՌԴ պաշտպանության նախարարությունից նշել են, որ վերադարձված ռուս զինծառայողները ներկայումս գտնվում են Բելառուսի Հանրապետության տարածքում, որտեղ նրանց ցուցաբերվում է անհրաժեշտ օգնություն: Նրանց հետ աշխատում է նաեւ Ռուսաստանի մարդու իրավունքների հանձնակատար Յանա Լանտրատովան: Հաղորդվում է նաեւ, որ ռազմագերիների վերադարձի գործընթացում մարդասիրական միջնորդական առաքելություն են իրականացրել Արաբական Միացյալ Էմիրությունները, որոնք աջակցել են փոխանակման կազմակերպմանը: Սա Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ պատերազմի ընթացքում իրականացված ռազմագերիների հերթական փոխանակումն է:



Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից անհատ ձեռնարկատեր Մխիթար Մարգարյանին պատկանող հաց եւ հացաբուլկեղենի արտադրամասում (Լոռու մարզ, քաղաք Վանաձոր) իրականացված ստուգման ընթացքում պարզվել է, որ խախտվել են «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված սանիտարահիգիենիկ պահանջները, մասնավորաբար՝ արտադրական շինությունների նախագծումը, կառուցվածքը, դասավորվածությունը չեն բացառել պարենային հումքի եւ սննդամթերքի, աղտոտված եւ մաքուր գույքի խաչաձեւվող հոսքերը, չի ապահովվել տեխնոլոգիական գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ տարածությունը, հատակների եւ պատերի մակերեւույթները պատրաստված չեն եղել անջրանցիկ, լվացվող, ախտահանվող նյութերից, առաստաղը նորոգված չի եղել: Տեսչական մարմնի ղեկավարի որոշմամբ՝ հացի եւ հացաբուլկեղենի արտադրամասի արտադրական գործունեությունը կասեցվել է մինչեւ հայտնաբերված խախտումները վերացնելը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԽՈՍՔԸ ԾՐԱԳՐԱՎՈՐՎԱԾ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ Է»

ArmLur.am-ը զրուցել է «Բոլորին դեմ եմ»-ի անդամ Սպարտակ Կյուրեղյանի հետ:

- Պարոն Կյուրեղյան, մասնակցելով համապետական ընտրություններին՝ դուք հավաքեցիք ավելի քան 20 հազար ձայն: Որպես նորաստեղծ քաղաքական ուժ՝ ինչպե՞ս եք գնահատում այդ արդյունքն ու մարդկանց վստահությունը ձեր նկատմամբ:

- Մարդկանց վստահությունն արտահայտվեց հենց ընտրությունների արդյունքներով: Իհարկե, մեր օրակարգն ավելի լայն էր, եւ մենք ցանկանում էինք հասնել ավելի մեծ հաջողության, ինչի համար շատ ավելի մեծ թվով ձայներ էին անհրաժեշտ: Սակայն ցանկանում եմ շնորհակալություն հայտնել բոլոր այն քաղաքացիներին, ովքեր վստահեցին մեզ եւ կողմ քվեարկեցին «Բոլորին դեմ եմ» կուսակցությանը եւ մեր օրակարգին:

- Որո՞նք են ձեր հետագա ծրագրերը:

- «Բոլորին դեմ» կուսակցությունն այլեւս ծրագրեր չունի: Մենք կուսակցությունը տանելու ենք ինքնալուծարման, իսկ կուսակցության անդամներն ազատ կլինեն իրենց հետագա քաղաքական ճանապարհը կազմակերպելու հարցում: Համոզված եմ, որ նրանցից շատերը շարունակելու են քաղաքական պայքարը միասին: Այս կուսակցությունը շատերի համար առաջին փորձն էր քաղաքականություն մտնելու, սակայն չեմ կարծում, որ այդ մարդիկ կդադարեն զբաղվել քաղաքականությամբ: Մեր նպատակը երբեք չի սահմանափակվել միայն կուսակցության գոյությամբ: Մենք ցանկանում էինք քաղաքական եւ ընտրական համակարգերում փոփոխություններ իրականացնել, նոր մոտեցումներ ու թարմություն բերել քաղաքական դաշտ:

- Այսինքն՝ ճի՞շտ ենք հասկանում, որ «Բոլորին դեմ» քաղաքական ուժը դադարեցնում է իր գործունեությունը:

- Այո՛: Ի սկզբանե մեր նպատակը քաղաքական համակարգում փոփոխություններ իրականացնելն էր, ոչ թե երկարաժամկետ կուսակցական գործունեությունը:

- Սակայն բոլոր հարցումները ցույց էին տալիս, որ դուք խորհրդարան չէիք անցնելու: Ձեր ընտրողները դա կարո՞ղ են ընկալել որպես ձայների փոշիացում կամ գործող իշխանություններին օգնելու քայլ:

- Այն մարդիկ, ովքեր մեզ են քվեարկել, մեծ հավանականությամբ այլ պայմաններում ընդհանրապես չէին մասնակցի ընտրություններին: Մենք շեմը չհաղթահարեցինք, սակայն ընդդիմությունն էլ բավարար ձայներ չհավաքեց, որպեսզի իշխանափոխություն իրականացներ: Այսինքն՝ մեր մասնակցությունը չի եղել այն գործոնը, որի պատճառով իշխանությունը պահպանեց մեծամասնությունը:

Այլ հարց է ընտրությունների կազմակերպման ընթացքը, վարչական ռեսուրսի կիրառման եւ հնարավոր ընտրախախտումների վերաբերյալ մտահոգությունները: Այդ ամենը նպաստեց այն արդյունքին, որը, իմ կարծիքով, չբավարարեց ոչ իշխանությանը, ոչ ընդդիմությանը, ոչ էլ մեզ: Սա, իմ համոզմամբ, ժողովրդավարության առաջընթաց չէր, այլ՝ հետքայլ:

- Այսինքն՝ դուք այլընտրանք էիք այն մարդկանց համար, ովքեր հակառակ դեպքում ընդհանրապես չէին մասնակցի ընտրություններին:

- Այո՛, շատերի համար մենք հենց այդ այլընտրանքն էինք:

- Ինչպե՞ս եք գնահատում հետընտրական գործընթացները:

- Այս պահին ամենամեծ ինտրիգը շեմի հաղթահարման վերաբերյալ վիճարկումներն են: Ես կարծում եմ, որ վերաքվեարկություն չանցկացնելը խիստ անարդար որոշում կլինի, քանի որ Ընտրական օրենսգրքի 101-րդ հոդվածը հստակ կարգավորում է, թե ինչ պետք է արվեր, իսկ դա չի իրականացվել: Չեմ ցանկանում գնահատել՝ դա միտումնավո՞ր էր, թե՞ ոչ, բայց կարծում եմ՝ գործընթացն արդար չի եղել:

- Իսկ ընդդիմությունը, ձեր կարծիքով, կվերցնի՞ մանդատները:

- Թեեւ ես որեւէ քաղաքական ուժի մաս չեմ, կարծում եմ, որ վերջում նրանք կվերցնեն մանդատները, եւ առաջիկա հինգ տարիներին մենք կտեսնենք այնպիսի քաղաքական իրավիճակ, ինչպիսին արդեն տեսել ենք: Ցավոք:

- Սամվել Կարապետյանը եւ «Հայ ազգային կոնգրեսը» միասնության կոչ են արել ընդդիմադիր ուժերին: Պատրա՞ստ եք միանալ այդ նախաձեռնությանը:

- Չեմ կարող պատասխանել կուսակցության բոլոր անդամների անունից, քանի որ կուսակցությունը լուծարվելու է, եւ յուրաքանչյուր անդամ ինքնուրույն կորոշի իր հետագա ճանապարհը: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես չեմ կարծում, որ այդ ճանապարհով հնարավոր կլինի հաջողության հասնել: Նույնիսկ եթե այդ կոչը հնչեր ընտրություններից առաջ, միեւնույն է կարծում եմ, որ Հայաստանում կան շատ մարդիկ, ովքեր չեն ցանկանում ընտրել ո՛չ գործող իշխանության, ո՛չ էլ ներկայիս ընդդիմության ճանապարհը: Ես հենց այդ մարդկանց միավորելու նպատակով եմ պատրաստվում շարունակել իմ քաղաքական գործունեությունը:

- Կուսակցությունը լուծարելու որոշումը նախապե՞ս էր կայացված, թե՞ դրա պատճառը ֆինանսական կամ այլ խնդիրներն են:

- Դա նախապես մտածված որոշում էր: Ֆինանսական խնդիրներ չունենք, մեր բոլոր ծախսերը հոգացել ենք: Խոսքը ոչ թե սնանկացման, այլ ծրագրավորված լուծարման մասին է:

- Հինգ տարի հետո քաղաքացիները կարո՞ղ են կրկին ձեզ տեսնել ընտրություններին մասնակցելիս:

- Այո՛: Մեր թիմի շատ անդամներ մտադիր են շարունակել քաղաքական գործունեությունը: Առաջիկա հինգ տարիներին մենք կաշխատենք քաղաքական գործընթացներում ակտիվ մնալ, մարդկանց միավորել եւ նոր, ստեղծարար մոտեցումներով նպաստել փոփոխություններին:

- Այսինքն՝ կուսակցությունը լուծարվում է, բայց ձեր քաղաքական ճանապարհը շարունակվում է:

- Այո՛, մենք շարունակելու ենք մասնակցել քաղաքական գործընթացներին:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ԱԶԱՏԱԿԱՆԱՑՈՒՄ

Կառավարությունը հավանություն է տվել 2026թ. փետրվարի 5-ին ստորագրված «Ծառայությունների առեւտրի եւ ներդրումների մասին Հայաստանի Հանրապետության եւ Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարությունների միջեւ» համաձայնագիրը վավերացնելու մասին» ՀՀ օրենքի նախագծին:

Համաձայնագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության եւ Արաբական Միացյալ Էմիրությունների միջեւ ծառայությունների առեւտրի եւ ներդրումների իրականացման գործընթացների ազատականացումը: Համաձայնագիրը նախատեսում է ծառայությունների առեւտրի եւ ներդրումների ոլորտում խոչընդոտների փոխադարձ վերացում, տնտեսական արդյունավետության բարձրացում եւ բարենպաստ պայմանների ստեղծում՝ ընդլայնելով տնտեսական համագործակցությունը եւ փոխշահավետ օգուտները, ինչպես նաեւ նպաստելով երկկողմ տնտեսական հարաբերությունների ակտիվացմանը եւ երկուստեք նոր շուկաների բացահայտմանը:

Ներդրումների խրախուսման եւ փոխադարձ պաշտպանության կարգավորումներով Համաձայնագիրը միաժամանակ կխթանի նաեւ գործարար նախաձեռնությունները: Համաձայնագիրը ներառում է ծառայությունների առեւտրի, ներդրումների, վեճերի կարգավորման, ինչպես նաեւ թափանցիկության մասին առանձին գլուխներ:

Համաձայնագրի բաղկացուցիչ մասն են կազմում ծառայություններին առնչվող հավելվածները, որոնք համաձայնեցվել են բանակցությունների ընթացքում, եւ որոնց մեջ ներառված ծառայությունների տեսակների հանդեպ կողմերը պատրաստ են տրամադրել համապատասխան արտոնություններ՝ Առեւտրի համաշխարհային կազմակերպության անդամակցությամբ ՀՀ-ի եւ ԱՄԷ կողմից ստանձնած պարտավորությունների համեմատ: Մասնավորապես, հայկական կողմից էմիրաթական կողմի համար նախատեսվել են արտոնություններ գյուղատնտեսական, որսորդական, անտառտնտեսություններին առնչվող, ինչպես նաեւ ինժեներիայի ոլորտներում գիտատեխնիկական խորհրդատվության, առողջապահական, կրթական, բնապահպանական եւ փոստային ծառայությունների մատուցման մասով: Էմիրաթական կողմից հայկական կողմի համար նախատեսվել են արտոնություններ համակարգչային, գիտատեխնիկական խորհրդատվության, սարքավորումների վերանորոգման, քարտեզագրման, հեռախոսակապի ոլորտներում, ինչպես նաեւ նախատեսվել են որոշ պարզեցումներ իրավաբանական, շինարարական, հաշվապահական եւ աուդիտի ոլորտներում ծառայությունների մատուցման մասով:

ԱՐԳԵԼԱՓԱԿԵԼ Է ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԸ

App Store-ից VK հավելվածների հեռացումը տեղի է ունեցել առանց նախազգուշացման, Մոսկվան որեւէ ուղղով պահանջներ չի ստացել: Այս մասին ճեպազրույցի ժամանակ հայտարարել է Ռուսաստանի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան, հաղորդում է ՌԻԱ Նովոստի-ն: «Այս ամենը արվել է, ինչը շատ կարեւոր է, առանց նախազգուշացման, այս ամենը արվել է միակողմանի կարգով: Որեւէ պահանջ՝ գրավոր, բանավոր, իրավաբանորեն ձեւակերպված, որեւէ ուղղով ուղարկված, իհարկե, չի եղել», - ասել է նա:

Հիշեցնենք, որ App Store-ից անհետացել են VK-ին պատկանող բոլոր ծառայությունները, մասնավորապես՝ «VK Видео»-ն, «VK Музыка»-ն, «VK Мессенджер»-ը, «Одноклассники»-ն, «Дзен»-ը, իսկ այնուհետեւ նաեւ բուն VK հավելվածը:

VK-ում ՌԻԱ Նովոստիին հաստատել են ծառայությունների հեռացման փաստը՝ հայտարարելով, որ Apple-ը VK հավելվածները հեռացրել է առանց նախազգուշացման՝ միակողմանի կարգով: Այնտեղ ռուս օգտատերերի նկատմամբ ամերիկյան ընկերության նման գործողությունները համարել են ոչնչով չհիմնավորված եւ անընդունելի:

Իր հերթին Ռուսաստանի նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը հայտարարել է, որ App Store ծառայության կողմից VK հավելվածների հեռացումը հարց է բարձրացնում դրա հուսալիության եւ այն մասին, թե որքանով կարելի է վստահել դրան: Նա հավելել է, որ ռուսական գերատեսչությունները կկապ հաստատեն Apple ընկերության հետ VK հավելվածների հեռացման հարցերի շուրջ՝ պարզաբանումներ ստանալու համար:

ԱՐՏԱՀԱՆՎԵԼ Է ՀԵՐԹԱԿԱՆ ԽՄԲԱՔԱՆԱԿԸ

Երեկ Ադրբեջանից Հայաստան է արտահանվել 18 վագոն ԱԻ-92 մակնիշի ավտոմոբիլային բենզին՝ ընդհանուր՝ 971 տոննա քաշով, ինչպես նաեւ 8 վագոն դիզելային վառելիք՝ ընդհանուր 467 տոննա քաշով: Այս մասին հայտնում են ադրբեջանական ԶԼՄ-ները: Նշենք, որ երեկվա դրությամբ Ադրբեջանից Հայաստան արդեն արտահանվել է ավելի քան 14 հազար տոննա դիզելային վառելիք եւ 4 հազար տոննայից ավելի ԱԻ-92 եւ ԱԻ-95 մակնիշի բենզին:

Առ այսօր Ադրբեջանի տարածքով Ռուսաստանից Հայաստան տարանցիկ եղանակով փոխադրվել է ավելի քան 34 հազար տոննա հացահատիկ, մոտ 8 հազար տոննա պարարտանյութ, 133 տոննա ալյումին, 68 տոննա հնդկացորեն եւ 414 տոննա անտրացիտ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԻՐԱՆԸ ՎՆԱՍԵԼ Է

ԱՄՆ ռազմածովային ավիակայան Բահրեյնում (NSA Bahrain), որը Հինգերորդ նավատորմի շտաբ-բնակարանն է, լրջորեն վնասվել է այս գարնանը Իրանի կողմից իրականացված պատասխան հարվածների ժամանակ եւ այլեւս ի վիճակի չէ կատարել իր հիմնական գործառույթները, հաղորդում է The Wall Street Journal (WSJ)-ը՝ հղում անելով Պենտագոնի աղբյուրներին եւ արբանյակային պատկերների վերլուծությանը: Ինչպես նշում է հրատարակությունը, ԱՄՆ ռազմածովային ուժերը պաշտոնապես չեն հաստատել բազայում զգալի վնասների մասին հաղորդագրությունները: WSJ-ի տվյալներով՝ ռազմական գործողությունների ակտիվ փուլում Իրանի կողմից իրականացված հարվածները զգալիորեն ավերել են ռազմածովային շտաբ-բնակարանի շենքը, ինչպես նաեւ զգալի վնաս են հասցրել ԱՄՆ ռազմածովային ուժերի ուսումնական համալիրին, նավահանգստային ենթակառուցվածքներին, զորանոցներին եւ պահեստային տարածքներին:

Պենտագոնը ներկայումս քննարկում է Բահրեյնի բազայի համար տարբեր տարբերակներ, այդ թվում՝ դրա գործառույթների մասնակի փոխանցումը Մերձավոր Արեւելքի այլ օբյեկտներին: Բահրեյնի բազայի օբյեկտների կառուցման ընդհանուր արժեքը գնահատվում է 400 միլիոն դոլար: Բահրեյնի բազան ԱՄՆ ռազմածովային ուժերի Հինգերորդ նավատորմի տեղակայման վայրն է 1995 թվականից: Իրանի ափից 240 կմ հեռավորության վրա գտնվող օբյեկտը կարող է տեղավորել ԱՄՆ ռազմածովային ուժերի բոլոր տեսակի նավեր:

ԴԱԴԱՐԵՑՐԵԼ Է ՆԱՎԱՍՏԻՆԵՐԻ ՏԱՐՀԱՆՈՒՄԸ

ՄԱԿ-ի Միջազգային ծովային կազմակերպությունը (IMO) կասեցրել է Հորմուզի նեղուցից նավաստիներին տարհանելու իր ծրագիրը՝ Օմանի ափերի մոտ բեռնատար նավի վրա հարձակումից հետո: Այս մասին հայտարարությամբ հայտարարել է կազմակերպության գլխավոր քարտուղար Արսենիո Դոմինգեսը: «ՄԱԿ-ի տարհանման ծրագրի մեկնարկից հետո, որն արդեն հաջողությամբ տարհանել է մի քանի նավ, ես որոշել եմ ժամանակավորապես կասեցնել դրա իրականացումը՝ վերահաստատելու համար, որ մեր տարհանման ցուցակում ընդգրկված նավերի եւ տարածաշրջանում գտնվող բոլոր նավերի համար կշարունակեն պահպանվել անհրաժեշտ անվտանգության երաշխիքները», - նշել է Դոմինգեսը: Նա նշել է, որ տեղեկացվել է Օմանի ծոցում Հորմուզի նեղուցով անցնող նավի վրա հարձակման մասին: «Այս նավը չէր հետեւում ՄԱԿ-ի տարհանման ընթացակարգին: Ես միշտ պնդել եմ, որ ծովագնացների անվտանգությունը գերակա է: Հետեւաբար, համակարգված մոտեցումը եւ նավարկության անվտանգությունն ապահովելու համար տարհանման ծրագիրը կդադարեցվի մինչեւ իրավիճակը պարզվի», - հայտարարել է Դոմինգեսը:

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

ՈՎՔԵ՞Ր ԿԼԻՆԵՆ ԱԺ ՓՈԽՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ

ArmLur.am-ը իշխանական աղբյուրներից տեղեկացավ, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունում շարունակվում են ներքին քննարկումները Ազգային Ժողովի փոխնախագահների թեկնածուների եւ խմբակցության ղեկավար կազմի ձեւավորման շուրջ:

Ar2Lur.a2-ի տեղեկություններով՝ մինչեւ այսօր՝ ժամը 18:00-ն, ՔՊ աշխատակազմը պետք է հավաքագրի կուսակցության անդամների կողմից ներկայացվող առաջադրումները ԱԺ փոխնախագահների պաշտոնների համար: Դրանից հետո հարցը կքննարկվի կուսակցության ղեկավար մարմիններում, իսկ հաջորդ շաբաթ արդեն ՔՊ վարչությունը նախատեսում է ընտրել փոխնախագահների թեկնածուներին:

Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ այս պահին առաջադրվել են ԱԺ պատգամավորներ Վահագն Ալեքսանյանն ու Ալխաս Ղազարյանը: Իշխանական շրջանակներում չի բացառվում նաեւ Արուսյակ Ջուլհակյանի առաջադրումը, թեեւ կուսակցության ներսում նշում են, որ կարող են ի հայտ գալ նաեւ այլ թեկնածուներ:

Ըստ մեր տեղեկությունների՝ թե՛ Ալխաս Ղազարյանը, թե՛ Վահագն Ալեքսանյանը կուսակցության ներսում ունեն զգալի աջակցություն: Նրանք ՔՊ վերջին ներքին ընտրություններում եղել են ամենաշատ ձայներ ստացած անդամների թվում, ինչը դիտարկվում է որպես նրանց քաղաքական կշռի կարեւոր ցուցիչ:

Ներքին քննարկումների ավարտից հետո իշխանական ուժը կանցնի նաեւ Ազգային Ժողովի մշտական հանձնաժողովների ղեկավար կազմի ձեւավորմանը: Մեր տեղեկություններով՝ փոխնախագահների թեկնածությունների հստակեցումից հետո ՔՊ-ում կսկսվեն քննարկումները հանձնաժողովների նախագահների, անդամների թեկնածությունների շուրջ, ինչպես նաեւ ՔՊ խմբակցության ղեկավար կազմի ընտրություն:

Այսպիսով, առաջիկա օրերին իշխող ուժում սպասվում են կարեւոր կադրային որոշումներ, որոնք կձեւավորեն Ազգային Ժողովի նոր ղեկավար կազմի եւ խորհրդարանական հանձնաժողովների աշխատանքի հետագա պատկերը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ Է ՏՎԵԼ

ԵՄ խորհուրդը հաստատել է ԵՄ-ԱՄՆ առեւտրային համաձայնագրի շրջանակում սակագնային պարտավորությունները: Ինչպես տեղեկացնում է «Արմենպրես»-ը՝ վկայակոչելով Deutsche Welle-ն, այդ մասին հայտարարել է ԵՄ Խորհրդի մամուլի ծառայությունը: Բրյուսելը պարզաբանել է, որ 2025 թվականի օգոստոսի 21-ի ԵՄ-ԱՄՆ համատեղ հայտարարության մեջ ամրագրված պարտավորություններին համապատասխան՝ պաշտոնապես ընդունվել են երկու կանոնակարգեր: «Այդ կանոնակարգերի ընդունումն ավարտում է օրենսդրական գործընթացը եւ վերահաստատում ԵՄ-ի հանձնառությունը կայուն, կանխատեսելի եւ փոխշահավետ տրանսատլանտյան առեւտրային հարաբերությունների հարցում՝ միաժամանակ պահպանելով եվրոպական տնտեսական շահերը պաշտպանելու համար անհրաժեշտ երաշխիքները», - նշված է ԵՄ Խորհրդի մամուլի ծառայության հաղորդագրության մեջ:

Հաստատված կանոնակարգերը վերացնում են Միացյալ Նահանգներից արդյունաբերական ապրանքների վրա մնացած ԵՄ մաքսատուրքերը, ներմուծում են արտոնյալ մուտք որոշակի տեսակի ծովամթերքի եւ որոշ գյուղատնտեսական ապրանքների համար Միացյալ Նահանգներից, եւ երկարաձգում են ծովախեցգետնի ներմուծման վրա դրված մաքսատուրքերի կասեցումը: Միեւնույն ժամանակ, կանոնակարգերը նախատեսում են մեխանիզմ, որը թույլ է տալիս Եվրոպական հանձնաժողովին արագ արձագանքել ներմուծման զգալի աճի դեպքում, որը լուրջ վնաս է հասցնում կամ սպառնում է լուրջ վնաս հասցնել ԵՄ օպերատորներին: Բացի այդ, ԵՄ-ի կարողությունները կասեցնելու սակագնային արտոնությունները չեղարկվում են այն դեպքերում, երբ ԱՄՆ-ն չի կատարում իր պարտավորությունները, խաթարում է համատեղ հայտարարության նպատակները կամ հավասարակշռված առեւտրային հարաբերությունները, այդ թվում՝ խտրական միջոցառումների միջոցով:

700 ՄԼՆ ԴՈԼԱՐԻ ՌԵԱԿՏԻՎ ՇԱՐԺԻՉՆԵՐ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի վարչակազմը պաշտոնապես տեղեկացրել է Կոնգրեսին Թուրքիային ավելի քան 700 միլիոն դոլար արժողությամբ տասնյակ ռեակտիվ շարժիչներ վաճառելու իր մտադրության մասին: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին հաղորդում է Reuters-ը՝ վկայակոչելով Կոնգրեսին ուղղված համապատասխան ծանուցումը: «ԱՄՆ կառավարությունը պատրաստ է լիցենզավորել այս ապրանքների արտահանումը՝ հաշվի առնելով քաղաքական, ռազմական, տնտեսական, մարդու իրավունքների եւ զենքի վերահսկողության նկատառումները»,-նշվել է Պետքարտուղարության կողմից Կոնգրեսին ուղղված ծանուցման մեջ: Կոնգրեսն ունի 15 օր, որպեսզի համատեղ բանաձեւով մերժի վաճառքը, եթե ցանկանում է արգելափակել այն: Նման բանաձեւը պետք է ընդունվի երկու պալատներում, եւ Թրամփը կարող է վետո դնել դրա վրա: Ըստ Reuters-ի՝ շարժիչների մատակարարումը «կարեւոր ժեստ կլինի Անկարայի համար՝ հուլիսի սկզբին այնտեղ կայանալիք ՆԱՏՕ-ի գագաթնաժողովից առաջ»: Ինչպես նշում է գործակալությունը, խոսքը General Electric շարժիչների մասին է՝ նախատեսված Թուրքիայի կողմից մշակվող հինգերորդ սերնդի Kaan կործանիչների համար. դրանք ամերիկյան F-35 կործանիչների թուրքական այլընտրանքն են այն բանից հետո, երբ Անկարան հեռացվել էր F-35 կործանիչների ծրագրից ռուսական C-400 հակահրթիռային պաշտպանության համակարգերի ձեռքբերման պատճառով: Թուրքիայի կողմից 2019 թվականին ռուսական ՀՕՊ համակարգերի ձեռքբերումը վատթարացրել է հարաբերությունները Միացյալ Նահանգների հետ: Ավելի վաղ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը Սպիտակ տանը ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Մարկ Ռյուտեի հետ հանդիպման ժամանակ՝ նշել էր, որ հուլիսի սկզբին Անկարայում կայանալիք ՆԱՏՕ-ի գագաթնաժողովից առաջ կարող է որոշում կայացնել Թուրքիային ամերիկյան ռազմական մատակարարումների, այդ թվում՝ F-35 կործանիչների վերաբերյալ: ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսը նույնպես հայտարարել է, որ վարչակազմը դիտարկում է, թե ինչպես կարող է Թուրքիային վաճառել F-35 կործանիչներ:



ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎԵԼ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ՀՀ ֆինչական կոմիտեի Երեւան քաղաքի ֆինչական վարչության ծանր հանցագործությունների ֆինության բաժնում կատարված ոստաճ եւ համակողմանի նախաֆինության արդյունքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ դատական նիստի ընթացքում մեղադրյալ Վ.Ղ.-ն միջամտել է պաշտոնատար անձի օրինական ծառայողական գործունեությանը:

Մասնավորապես՝ 2026 թվականի մայիսի 27-ին ՀՀ հակակոռուպցիոն քրեական դատարանում քննվող քրեական գործով մեղադրյալ Վ.Ղ.-ն դատական նիստի ավարտից անմիջապես հետո փորձել է պատասխանել լրագրողների հարցերին եւ գիտակցելով ՀՀ ՆԳՆ ոստիկանության պաշտոնատար անձի՝ ուղեկցող աշխատանքներ իրականացնող ոստիկանի ծառայողական պարտականությունները կատարելու հանգամանքը, նրա օրինական ծառայողական գործունեությանը միջամտելու նպատակով հրաժարվել է կատարել ոստիկանի՝ դատական նիստի ավարտից հետո կալանավորված անձանց պահելու համար նախատեսված դատարանի խուց տեղափոխվելու օրինական պահանջը: Այնուհետեւ, երբ ոստիկանը փորձել է ուղեկցել Վ.Ղ.-ին, նա բռնություն՝ ֆիզիկական ներգործություն է գործադրել ոստիկանի նկատմամբ՝ միջամտելով պաշտոնատար անձի օրինական ծառայողական գործունեությանը:

2026 թվականի հունիսի 25-ին քննիչի միջնորդության հիման վրա հսկող դատախազը Վ.Ղ.-ի նկատմամբ հարուցել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 3-րդ մասով (պաշտոնատար անձի օրինական ծառայողական գործունեությանը միջամտելը): Քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է:

ԼՈՒՐԵՐ

ԿԱՐՈՂ Է ԱՅՑԵԼԵԼ ԵԿԵՂԵՑԻ

Արագածոտնի թեմի դիվանապետ, Մուղնու Սուրբ Գեւորգ եկեղեցու հոգեւոր հովիվ տեր Գարեգին քահանա Արսենյանի նկատմամբ կիրառված վարչական հսկողության սահմանափակումները մեղմացվեցին. նրան թույլատրվում է այցելել Սուրբ Գեւորգ եկեղեցի՝ բացառելով այլ հոգեւորականների հետ շփումը: Դատավոր Դավիթ Դաբաղյանը թույլ տվեց նաեւ տեր Գարեգինին պատարագներ մատուցել՝ կրկին բացառելով շփումը: Նշենք՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ Տեր Գարեգինը 2005 թ. նոյեմբերի 10-ից նշանակվել է Արագածոտնի Թեմում՝ ծառայության կոչվելով Սաղմոսավանքի հովվության հոգեւոր հովիվ՝ համատեղությամբ զբաղեցնելով նաեւ Թեմի Դիվանապետի պարտականությունները: Հիշեցնենք, որ հավաքներին մասնակցելուն հարկադրելու, ընտրական իրավունքի իրականացմանը խոչընդոտելու եւ խոշոր չափերով վստահված գույքի հափշտակություն կատարելու դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության շրջանակներում 2025-ի հոկտեմբերի 15-ին Արագածոտնի թեմում իրավապահները գործողություններ էին իրականացրել: Կատարված երկու տասնյակից ավելի խուզարկությունների արդյունքում հայտնաբերվել եւ վերցվել են քրեական վարույթի համար նշանակություն ունեցող փաստաթղթեր, էլեկտրոնային տեղեկատվություն պարունակող կրիչներ, առանձնապես խոշոր չափերով գումար, ոսկյա, արծաթյա մեծաքանակ զարդեր, մի շարք առեւտրային կազմակերպությունների անվամբ տրված բազմաթիվ վառելիքի կտրոններ, այլ իրեր ու առարկաներ:

ՇՈՒՐՋ 9 ԿԳ ՄԱՐԻԽՈՒԱՆԱ

Քրեական ոստիկանության Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողները ստացված օպերատիվ տեղեկությունն իրացրին Քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության գործընկերների եւ Կոտայքի մարզի պարեկների հետ:Մաքսանենգ ճանապարհով ներկրված թմրամիջոց ձեռք բերելու, պահելու եւ իրացնելու հիմնավոր կասկածանքով հունիսի 23-ին Զրվեժ-Առինջ ճանապարհին ձերբակալվեցին եւ նրանցից մեկի կողմից շահագործվող «Հոնդա» մակնիշի մեքենայով հանդերձ Համայնքային ոստիկանության Նոր Նորքի բաժին տեղափոխվեցին Երեւանի բնակիչներ՝ 33 եւ 34-ամյա տղամարդիկ:

34-ամյա տղամարդու անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց մոտ 9 կգ մարիխուանա, որը ըստ նախնական տեղեկությունների պետք է իրացներ: Տղամարդիկ ներկայացվել են նախաքննական մարմին:

Նախաքննությունը շարունակվում է:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ԼԻՑՔԱՎՈՐՎԱԾ ԱՏՐՃԱՆԱԿ

Հունիսի 25-ին՝ ժամը 17:30-ի սահմաններում, Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչության անձի հետախուզման բաժնի ծառայողները, ձեռնարկած օպերատիվ-միջոցառումների արդյունքում, մայրաքաղաքի Աբովյան-Պուշկինի փողոցների խաչմերուկում ձերբակալել եւ վարչություն են տեղափոխել 2020 թվականի հուլիսից՝ մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կատարված սպանությանն օժանդակելու մեղադրանքով հետախուզվող 35-ամյա տղամարդուն: Նրա խուզարկությամբ հայտնաբերվել է 9 փամփուշտով լիցքավորված ատրճանակ: Ձերբակալվածն ու կազմված փաստաթղթերը ներկայացվել են Երեւան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժին:

Նախաքննությունը շարունակվում է:

ԼՈՒՐԵՐ

ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՍՐԲԱԶԱՆԻ ԳՈՐԾՈՎ

ArmLur.am-ին մանրամասներ են հայտնի դարձել Միքայել Սրբազանի գործով առանձին սենյակի քննարկումներից, որ առաջ է քաշվել հարց՝ գործով վերջնական վերջակետ չդնել, այլ գնալ քայլերի: Օրինակ՝ քայլերից մեկը լինի այն, որ գործը ուղարկեն առաջին ատյանի դատարան՝ նոր քննության: Այս պահին առանձին սենյակում դեռ վերջնական որոշում չկա: Նշենք, որ Վերաքննիչ քրեական դատարանը՝դատավոր Էդգար Մանասյանի նախագահությամբ, կազմով՝ դատավորներ Նարինե Հովակիմյանի եւ Վաչե Մարգարյանի, հեռացել է առանձին սենյակ՝ Միքայել Սրբազանի դատավճռի դեմ բողոքների գործով որոշում կայացնելու: Այն կհրապարակվի պատրաստ լինելուն պես: Սրբազան հորը, հիշեցնենք, մեղադրում են իշխանությունը զավթելուն, տարածքային ամբողջականությունը խախտելուն, ինքնիշխանությունից հրաժարվելուն կամ սահմանադրական կարգի տապալմանն ուղղված կոչեր հնչեցնելու մեջ: Ըստ վարույթի նյութերի՝Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանը լրատվամիջոցներին տված հարցազրույցների ընթացքում հայտարարել է, թե պետք է ռազմական հեղաշրջում կատարել, մինչդեռ վիճարկվող հայտարարություններում իրավապահները հանցակազմ չեն տեսել, քրեական վարույթ չեն նախաձեռնել եւ հիշել են միայն երկու տարի անց՝Նիկոլ Փաշինյանի կողմից ՀԱԵ-ի թիրախավորմանը զուգահեռ կամ դրան հաջորդելով: Քրեական վարույթը նախաձեռնվել է 2025թ. հունիսի 17-ին:

Ք. Մ.

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է

Կանդազի՝Արթուր Ավանեսյանի գործով առաջին դատական նիստն է մեկնարկել: Հիշեցնենք, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ Արթուր Ավանեսյանը կալանավորվել է երկու ամսով: Արթուր Ավանեսյանը կասկածվում է ընտրակաշառք տալու մեջ: Նրա փաստաբանները հայտնել են, որ նա չի ընդունում մեղադրանքները: Հակակոռուպցիոն կոմիտեն էլ իր հերթին հայտնել է, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի եւ ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից համատեղ ձեռնարկված ապացուցողական եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության համակիրը 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք ՀՀ Ազգային Ժողովի ընտրություններին իրենց օգտին քվեարկելու դիմաց մի շարք ընտրողների աշխատանքի ընդունելու եւ այլ եղանակով խոստացել է տալ կաշառք, որը ընդունվել է վերջիններիս կողմից: Դեպքի առթիվ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով նախաձեռնվել է քրեական վարույթ, հանրային քրեական հետապնդում է հարուցվել չորս անձի նկատմամբ, ովքեր ձերբակալվել են:

Ք. Մ.

● *Հանրապետությունում հունիսի 24-ից 25-ը գրանցվել է մարմնական վնասվածք պատճառելու 9 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՐԵՐ

ՋՐԱՍՈՒԶԱԿԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ Է

ՆԳ նախարար Արփինե Սարգսյանը հունիսի 25-ին պարգեւներ է հանձնել Փրկարար ծառայության տարբեր ստորաբաժանումների ջրասուզակների, որոնք հունիսի 15-ից 22-ը ակտիվ ներգրավվածություն են ունեցել Փամբակ գետում իրականացված լայնածավալ որոնողական աշխատանքներին: Այս մասին հայտնում են ՆԳՆ-ից: Ծառայողական պարտականությունները բարեխղճորեն եւ բարձր պատասխանատվությամբ կատարելու համար ջրասուզակ Վահե Մելքոնյանը պարգեւատրվել է «Անբասիր ծառայության համար» մեդալով: «Անվեհեր փրկարար» մեդալով պարգեւատրվել են Հովակիմ Բաբայանը, Հայկ Քոչարյանը, Արմեն Խաչատրյանը, Պարգեւ Հովսեփյանը եւ Մխիթար Մեսրոպյանը: «Փրկություն, օգնություն» մեդալով պարգեւատրվել են Նարեկ Բաբայանը, Արթուր Խաչատրյանը, Խաչատուր Մուրադյանը, Թաթուլ Հովհաննիսյանը, Ռուբեն Հայրապետյանը, Արթուր Խաչատրյանը: Այլ հրամաններով պարգեւատրվել են նաեւ որոնողական աշխատանքներին ներգրավված փրկարարական ծառայողներ, որոնք իրենց ներդրումն են ունեցել իրականացված գործողությունների արդյունավետ կազմակերպման եւ կատարման գործում: ՆԳ նախարար Արփինե Սարգսյանը որոնողական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածում կատարած աշխատանքի համար շնորհակալություն է հայտնել փրկարարական ծառայողներին: Բարձր գնահատելով նրանց մասնագիտական պատրաստվածությունն ու անձնվեր ծառայությունը՝նախարարն ընդգծել է, որ բարդ որոնողական աշխատանքների ընթացքում գործել են բարձր պատասխանատվությամբ՝ հավատարիմ մնալով մասնագիտական առաքելությանը:

ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ՀԱԷԿ

ՀՀ ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանը երեկ փոխվարչապետ Միհր Գրիգորյանի հետ այցելել է Հայաստանի ատոմային էլեկտրակայան: Նախ շրջայց են կատարել ատոմակայանում, ապա ընդլայնված կազմով աշխատանքային խորհրդակցություն է իրականացվել: Խորհրդակցությանը մասնակցել են նաեւ ՏԿԵ փոխնախարար Նարեկ Ապիտոնյանը, ՀԱԷԿ տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանը, ՀԾԿՀ նախագահ Մեսրոպ Մեսրոպյանը, Միջուկային անվտանգության կոմիտեի տնօրենի պարտականությունները կատարող Խաչատուր Խաչիկյանը եւ էներգետիկ համակարգի ընկերությունների ղեկավարներ: Խորհրդակցությանը Էդուարդ Մարտիրոսյանը ներկայացրել է ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների ընթացքը: Քննարկվել են ոլորտին վերաբերող մի շարք այլ կարեւոր հարցեր:

ԵՐԿՐԱՇԱՐԺԵՐ

ՓՐԿԱՐԱՐՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՈՐՈՆԵԼ

Վենեսուելայում տեղի ունեցած երկու հզոր երկրաշարժերից հետո փրկարարական աշխատանքները շարունակվում են: Վերջին պաշտոնական տվյալներով՝ զոհերի թիվը հասել է առնվազն 235-ի, իսկ ավելի քան 4300 մարդ տարբեր աստիճանի վնասվածքներ է ստացել:

Երկրաշարժերը տեղի են ունեցել չորեքշաբթի՝ տեղական ժամանակով ժամը 18:04-ին, երբ երկիրը նշում էր ազգային տոնը, ինչի պատճառով շատ քաղաքացիներ գտնվել են իրենց տներում: Առաջին ստորգետնյա ցնցման ուժգնությունը կազմել է 7,2 մագնիտուդ, իսկ ընդամենը մի քանի վայրկյան անց գրանցվել է երկրորդ՝ ավելի ուժեղ՝ 7,5 մագնիտուդով երկրաշարժը: ԱՄՆ Երկրաբանական ծառայության (USGS) տվյալներով՝ երկու երկրաշարժերն էլ եղել են մակերեսին մոտ, ինչը զգալիորեն մեծացրել է ավերածությունների մասշտաբը:

Ամենաշատը տուժել են մայրաքաղաք Կարակասը եւ հարակից Լա Գուայրա քաղաքը, որտեղ բազմաթիվ շենքեր փլուզվել են: Փլատակների տակից դեռեւս լսվում են օգնության կանչեր, իսկ փրկարարները շարունակում են որոնել ողջ մնացածներին: Իշխանությունները չեն բացառում, որ զոհերի թիվը կարող է շարունակել աճել:

Վենեսուելայի Ազգային ժողովի նախագահ Խորխե Ռոդրիգեսի խոսքով՝ վնասվել կամ ամբողջությամբ ավերվել է առնվազն 250 շենք, որոնց մեծ մասը գտնվում է Լա Գուայրայում: Միայն Կարակասի Չակաո համայնքում փլուզված շենքերից մեկում հաստատվել է 11 մարդու մահը, իսկ 23 մարդ հաջողվել է փրկել: Ներքին գործերի նախարար Դիոսդադո Կաբելյոն հայտնել է, որ երկրաշարժերից վնասներ են կրել նաեւ Տրուխիլիո, Յարակույ, Կարաբոբո, Արագուա եւ Միրանդա նահանգները:

Երկրի ժամանակավոր նախագահ Դելսի Ռոդրիգեսը հայտարարել է արտակարգ դրություն եւ տեղեկացրել, որ հիմնական միջազգային օդանավակայանը՝ Մայկետիայի «Սիմոն Բոլիվար» օդանավակայանը, փակվել է լուրջ վնասների պատճառով: Երկրաշարժերից հետո գրանցվել է նաեւ առնվազն 30 հետցնցում:

ԱՄՆ Երկրաբանական ծառայությունը զգուշացրել է, որ աղետի իրական հետեւանքները դեռեւս ամբողջությամբ հայտնի չեն: Գերատեսչության գնահատմամբ՝ կա 42 տոկոս հավանականություն, որ զոհերի թիվը կարող է գերազանցել 10 հազար մարդուն, եւ 33 տոկոս հավանականություն, որ այն կարող է անցնել 100 հազարը: Միաժամանակ մասնագետներն ընդգծում են, որ այս գնահատականները կանխատեսումներ չեն, այլ արտակարգ իրավիճակների արձագանքման համար նախատեսված մոդելային հաշվարկներ: Մի շարք երկրներ արդեն օգնություն են առաջարկել Վենեսուելային: ԱՄՆ-ն հայտարարել է 150 միլիոն դոլարի մարդասիրական օգնության մասին եւ տարածաշրջան է ուղարկում որոնողափրկարարական խմբեր, ռազմատրանսպորտային ինքնաթիռներ եւ նավեր: Փրկարարական աշխատանքներին աջակցություն են հայտնել նաեւ Դոմինիկյան Հանրապետությունը, էլ Սալվադորը, Մեքսիկան եւ Քաթարը:

Մասնագետների գնահատմամբ՝ սա Վենեսուելայում գրանցված ամենահզոր երկրաշարժերից մեկն է վերջին ավելի քան մեկ դարի ընթացքում եւ ամենաուժեղը՝ 1900 թվականից ի վեր: Միաժամանակ շարունակվող հետցնցումները եւ վնասված ենթակառուցվածքները զգալիորեն բարդացնում են որոնողափրկարարական աշխատանքները:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԽՆԴՐԵԼ Է ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼ

Գրող, լրագրող, խմբագիր, 53 տարի Իջեւանի քոլեջում դասախոս աշխատող Ջավեն Ալավերդյանը համացանցում բաց նամակով դիմել է վարչապետ Նիկոլ Փաշինյանին, որով հայտնել է դասերի ընթացքում քոլեջի դռները բանալիով փակելու խնդրի մասին իր բարձրաձայնելու հետեւանքով ստացած նկատողության մասին: Նա հայտնել է. «Ձեզ գրում է կես դարից ավելի կրթության ոլորտում աշխատած անձ: Վերջերս Տավուշի Պ. Տեվեճեան տարածաշրջանային քոլեջ-հիմնադրամի ելքերը դասերի ընթացքում կողպվում են, շուրջ 350 ուսանողների եւ 80 աշխատակիցների կյանքի եւ առողջության հսմար ստեղծելով վտանգավոր իրավիճակներ՝ հնարավոր երկրաշարժերի, հրդեհների եւ այլնի դեպքում, կոպտորեն խախտելով համապատասխան կանոնները: Այդ առիթով հրապարակում ունեցա իմ ֆեյսբուքյան էջում՝ մտահոգությունս պատկան մարմիներին հաղորդելու համար: Եւ օ՛ զարմանք, քոլեջի տնօրենի պաշտոնակատար Մարգարիտ Պողոսյանի ձեռամբ մտահոգությանս համար ինձ նկատողություն տրվեց»: Ջ. Ալավերդյանը Տավուշի Պատրիկ Տեվեճեան տարածաշրջանային քոլեջ հիմնադրամի դեմ քաղաքացիական հայց է ներկայացրել, որով դատարանից խնդրել է կարգապահական տույժն անվավեր ճանաչել: Դրանից հետո քոլեջի տնօրենի պաշտոնակատար Մարգարիտ Պողոսյանը 2-րդ նկատողությունն է տվել Ջ. Ալավերդյանին: Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Նարինե Անանյանը հունիսի 3-ի նիստում որոշել է՝

1. կրկին ներկայացված հայցադիմումն ընդունել վարույթ եւ համարել դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:

2. «Տավուշի Պատրիկ Տեվեճեան տարածաշրջանային քոլեջ» հիմնադրամից պահանջել սույն որոշումն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում դատարան ներկայացնել.

- վիճարկվող անհատական իրավական ակտի՝ 29.04.2026թ. թիվ 44-26 հրամանի, հիմքում ընկած փաստերը հաստատող ապացույցները,

- վիճարկվող անհատական իրավական ակտում՝ 29.04.2026թ. թիվ 44-26 հրամանում, որպես հիմք վկայակոչված ներքին եւ անհատական իրավական ակտերը,

- Ջավեն Ալավերդյանի գործունեությունը կարգավորող պայմանագրերը:

Այս հայցով նախնական դասալսումների հաջորդ նիստը նշանակված է հունիսի 30-ին: Հունիսի 15-ին հարցում եմ ուղարկել ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանին. «Դուք տեղյա՞կ եք Իջեւանում գործող Տավուշի Պատրիկ Տեվեճեան տարածաշրջանային քոլեջի ղեկավարության եւ աշխատակազմի մի հատվածի մեջ առկա հակամարտության մասին: Ե՞րբ է այդ քոլեջ-հիմնադրամի տնօրեն ընտրվելու-նշանակվելու: Ինչպե՞ս է այդ քոլեջ-հիմնադրամի տնօրենի ընտրության եւ նշանակման ընթացակարգը, ԿԳՄՍ նախարարությունն այդ ընտրության եւ նշանակելու գործում ի՞նչ իրավասություններ ունի»: Ստացել եմ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանի պատասխանը. «Տավուշի Պատրիկ Տեվեճեան տարածաշրջանային պետական քոլեջի տնօրենի թափուր տեղի մրցույթը իրականացվել է «-Տավուշի Պատրիկ Տեվեճեան տարածաշրջանային պետական քոլեջ» հիմնադրամի գործադիր տնօրենի նշանակման կարգի համաձայն: Ըստ «Տավուշի Պատրիկ Տեվեճեան տարածաշրջանային քոլեջ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2026 թ.հունիսի 15-ի թիվ 8 նիստի արձանագրության՝ Նարինե Իշխանյանը հոգաբարձուների խորհրդի քվեարկությամբ նշանակվել է «Տավուշի Պատրիկ Տեվեճեան տարածաշրջանային քոլեջ» հիմնադրամի տնօրեն»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

● *Հանրապետությունում հունիսի 24-ից 25-ը հայտնաբերվել է 4 հետախուզվող, կամավոր ներկայացել է 2-ը:*

ԼՈՒՐԵՐ

ՅՈՒՆԻԲԱՆԿՆ ՈՒ «ՎԱՆՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄՆ ԱՋԱԿՑԵԼ ԵՆ

Հայաստան էին ժամանել պարալիմպիկ խաղերի ամերիկյան թիմի ոսկե medալակիրներ, ԱՄՆ սպորտի բանագնացներ Ռոզ Հոլերմանը եւ Սթիվ Սերիոն՝ անցկացնելու անվասայլակով բասկետբոլի վարպետության դաս եւ ցուցադրական խաղ: Յունիբանկն ու «Վանք» հիմնադրամը համատեղ հանդես են եկել որպես Երեւանում կայացած ամփոփիչ միջոցառման հովանավորներ՝ աջակցելով նախաձեռնությանը, որը միավորել էր սպորտը եւ կամքի ուժի կարեւոր ուղերձը: Յունիբանկը կարեւորում է սպորտի եւ ակտիվ կենսակերպի խթանմանն ուղղված ծրագրերը, որոնք նպաստում են նոր հնարավորությունների ստեղծմանը եւ ընդգծում նպատակասլացության կարեւորությունը:

Բանկը կշարունակի իր համագործակցությունը «Վանք» հիմնադրամի հետ՝ սոցիալական նշանակություն ունեցող նախաձեռնություններին աջակցելու նպատակով: *(Գ)*

ՈՉ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ Է ՀԱՅՏԱՐԱՐԵԼ

Էկվադորի նախագահ Դանիել Նոբոան երկրում պետական հանգստյան օր է հայտարարել՝ կապված ազգային հավաքականի՝ 2026 թվականի աշխարհի առաջնության փլեյ-օֆֆ դուրս գալու պատմական նվաճման հետ, գրում է armsport-ը: Հինգշաբթի օրը կայացած խմբային փուլի երրորդ տուրի խաղում Էկվադորի հավաքականը 2:1 հաշվով տպավորիչ եւ կամային հաղթանակ տոնեց Գերմանիայի ընտրանու նկատմամբ: Այս արդյունքի շնորհիվ Էկվադորցիները վաստակեցին 4 միավոր՝ զբաղեցնելով E խմբի երրորդ հորիզոնականը: Թիմը վերջին 20 տարվա ընթացքում առաջին անգամ նվաճեց Աշխարհի առաջնության փլեյ-օֆֆի ուղեգիր: Այս առիթով երկրի նախագահը սոցիալական ցանցերի իր էջերում շնորհավորական ուղերձ է հղել. «Շնորհակալություն ֆուտբոլիստներին եւ գլխավոր մարզչին, ովքեր, չնայած քննադատություններին, վիրավորանքներին եւ ծանր փորձություններին, կարողացան ոգեւորվել ու հսկայական ուրախություն պարգեւել ամբողջ երկրին: Ուրբաթ օրը հայտարարվում է հանգստյան օր: Կեցցե՛ Էկվադորը»,- գրել է Դանիել Նոբոան:

ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ

ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿԸ ԵՎ ԱԶԲ-Ն ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ԵՆ

Կոնվերս Բանկը եւ Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) ստորագրել են մինչեւ 15 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսավորման փաթեթ՝ ուղղված Հայաստանում միկրո, փոքր եւ միջին ձեռնարկությունների (ՄՓՄՁ), այդ թվում՝ կանանց կողմից ղեկավարվող բիզնեսների ֆինանսավորման հասանելիության ընդլայնմանը եւ կայուն ներդրումների խթանմանը:

Համագործակցության շրջանակում մինչեւ 13 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսավորումը կտրամադրի ԱԶԲ-ը, իսկ մինչեւ 2 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսավորումը՝ Կանադայի կլիմայի ու բնության՝ Ասիայի մասնավոր հատվածի համար հիմնադրամը (CANPA):

Ծրագիրը կաջակցի Հայաստանում ՄՓՄՁ-ների զարգացմանը՝ խթանելով ներդրումները վերականգնվող էներգիայի, էներգաարդյունավետության եւ այլ կայուն լուծումների ոլորտներում: Ֆինանսավորման առնվազն 20%-ը կուղղվի կանանց կողմից ղեկավարվող ձեռնարկություններին՝նպաստելով կանանց տնտեսական մասնակցության ընդլայնմանը եւ ձեռնարկատիրական հնարավորությունների զարգացմանը: Պայմանագիրը Երեւանում ստորագրել են Կոնվերս Բանկի գլխավոր գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ Հրանտ Հակոբյանը եւ ԱԶԲ մասնավոր հատվածի ֆինանսական հաստատությունների գծով տնօրեն Սուհայիլ Խանը:

ԱԶԲ մասնավոր հատվածի ֆինանսական հաստատությունների գծով տնօրեն Սուհայիլ Խանը նշել է. «Մենք ուրախ ենք համագործակցել Կոնվերս Բանկի եւ Կանադայի կառավարության հետ՝ աջակցելու Հայաստանում մասնավոր հատվածի զարգացմանը: Այս ֆինանսավորումը կնպաստի միկրո, փոքր եւ միջին ձեռնարկությունների աճին, կընդլայնի կանանց կողմից ղեկավարվող բիզնեսների ֆինանսավորման հնարավորությունները եւ կխթանի կայուն ֆինանսավորման զարգացումը: ՄՓՄՁ-ները Հայաստանի տնտեսության կարեւոր շարժիչ ուժերից են, սակայն հաճախ բախվում են ֆինանսավորման սահմանափակումների: Ծրագիրը կօգնի ընդլայնել ֆինանսավորման հասանելիությունը, աջակցել աշխատատեղերի ստեղծմանը եւ բարձրացնել տնտեսության դիմակայունությունը»:

Կոնվերս Բանկի գլխավոր գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ Հրանտ Հակոբյանը նշել է. «Մենք բարձր ենք գնահատում ԱԶԲ-ի հետ այս համագործակցությունը, որն ուղղված է Հայաստանում ՓՄՁ-ների ֆինանսավորման հասանելիության ընդլայնմանը եւ կայուն ներդրումների խթանմանը: Այս ծրագիրը կարեւոր քայլ է մեր ռազմավարության շրջանակում՝ ուղղված իրական տնտեսության ֆինանսավորմանը, մասնավորապես՝ փոքր եւ միջին բիզնեսների աջակցությանը եւ կանաչ ֆինանսավորման զարգացմանը:

Միաժամանակ կարեւորում ենք միջազգային ֆինանսական հաստատությունների հետ գործընկերության շարունակական զարգացումը, ինչը հնարավորություն է տալիս դիվերսիֆիկացնել ֆինանսավորման աղբյուրները եւ ընդլայնել ֆինանսավորման հնարավորությունները Հայաստանում:

Վստահ ենք, որ այս ծրագիրը կունենա շոշափելի ազդեցություն մասնավոր հատվածի աճի եւ ֆինանսական ներառականության վրա»:

Ստորագրության արարողակարգին ներկա էր նաեւ ՀՀ-ում Կանադայի դեսպան Էնդրյու Թըրները, որը նշել է. «Այս 2 մլն ԱՄՆ դոլարի ներդրումը՝ Կլիմայի եւ բնության՝ Ասիայի մասնավոր հատվածի համար նախատեսված հիմնադրամի միջոցով, եւ ԱԶԲ-ի ու Կոնվերս Բանկի հետ համագործակցությամբ, լայն հնարավորություններ է ստեղծում Կանադա-Հայաստան հարաբերությունների հետագա ամրապնդման համար: Սա Հայաստանում մեր երկրորդ նմանատիպ ծրագիրն է, եւ հույս ունենք, որ այն կդառնա նոր համագործակցությունների սկիզբ»:

ԱՃ Է ԳՐԱՆՑՈՒՄ

ՎՏԲ-Հայաստան Բանկն առձանագրում է գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող հաճախորդների համար նախատեսված «Արագ» վարկային ապրանքի նկատմամբ պահանջարկի աճ:

2026թ.-ի առաջին կիսամյակի արդյունքներով տվյալ պրոդուկտի շրջանակում տրամադրված վարկերի ծավալն աճել է 27%-ով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Վարկային միջոցները կարող են ուղղվել հիմնական եւ շրջանառու միջոցների համալրմանը, ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը, ինչպես նաեւ գործող ագրովարկերի մարմանը՝ վերաֆինանսավորվող վարկի գումարի մինչեւ 30%-ի չափով լրացուցիչ սահմանաչափի տրամադրմամբ:

Վարկի հայտի դիտարկումն իրականացվում է վարկառուի վարկային պատմության հիման վրա՝ առանց ֆինանսական վերլուծության, ինչը հնարավորություն է տալիս էապես պարզեցնել եւ արագացնել ֆինանսավորման գործընթացը: Վարկի վերաբերյալ որոշումն ընդունվում է փաստաթղթերի ամբողջական փաթեթի ներկայացումից հետո 2 ժամվա ընթացքում, իսկ վարկային միջոցների տրամադրումն իրականացվում է 3 աշխատանքային օրվա ընթացքում:

«Մենք արձանագրում ենք պահանջարկի կայուն աճ «Արագ» վարկի նկատմամբ ագրարային ոլորտի ներկայացուցիչների կողմից: Գյուղատնտեսների համար հատկապես կարեւոր են որոշումների ընդունման արագությունն ու ֆինանսավորման հասանելիությունը ակտիվ սեզոնային աշխատանքների ժամանակահատվածում: Այդ պատճառով մենք առավելագույնս պարզեցրել ենք հայտերի դիտարկման ընթացակարգը եւ կրճատել վարկերի տրամադրման ժամկետները:

Վարկավորման ծավալների աճը վկայում է պրոդուկտի պահանջվածության եւ Բանկի նկատմամբ հաճախորդների վստահության մասին: Հետագայում մենք եւս շարունակելու ենք զարգացնել գյուղատնտեսության աջակցմանն ու ոլորտի ձեռնարկությունների համար ֆինանսական հասանելիության բարձրացմանն ուղղված լուծումները»,- մեկնաբանում է ՎՏԲ-Հայաստան Բանկի Գլխավոր տնօրենի - Տնօրինության նախագահի տեղակալ Եվգենի Մոտովիլովը:

Պրոդուկտի շրջանակում ֆինանսավորվում են անասնապահության, բուսաբուծության, ջերմոցային տնտեսության, ջրերի արտադրության, գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման, ինչպես նաեւ գյուղատնտեսական ծառայությունների մատուցման ոլորտներում գործունեություն իրականացնող ձեռնարկությունները:

«Արագ» վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը կազմում է 14.2% (փաստացի տոկոսադրույքը՝ 20.2%-ից մինչեւ 22.78%): Վարկի գումարը 300 հազարից մինչեւ 20 մլն ՀՀ դրամ է, իսկ վարկավորման ժամկետը՝2-ից մինչեւ 5 տարի:

Վարկի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ ՎՏԲ-Հայաստան Բանկի պաշտոնական կայքում կամ Բանկի ցանկացած մասնաճյուղում:

ՎՏԲ-Հայաստան Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԳՈՐԳԱՐՎԵՍՏ

ՀԵՏԵՎԵԼ Է ԹԱՆԳԱՐԱՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքում նախատեսվում է ստեղծել Հայաստանի գորգարվեստի թանգարան: Այս կապակցությամբ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը եւ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանն այցելել են թանգարանի տարածք, որտեղ շինարարական աշխատանքներն ավարտական փուլում են գտնվում:

Գորգարվեստի թանգարանի ստեղծման նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ բարերար Լեւոն Վարթան Դեր Բեդրոսյանի միջեւ ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր: Համաձայն հուշագրի՝ բարերար Լեւոն Վարթան Դեր Բեդրոսյանի կողմից նախատեսվում է Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերել ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքում գտնվող անշարժ գույք, ինչպես նաեւ բարերարի անձնական հավաքածուն՝ Հայաստանում գորգերի թանգարանի ստեղծման նպատակով:

Նախարար Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ ՀՀ մշակույթի պահպանման եւ զարգացման ռազմավարությամբ նախատեսված էր Գորգի թանգարանի ստեղծում՝ որպես ոլորտում կարեւոր անելիք. «Ես շատ ուրախ եմ, որ թանգարանը կստեղծվի պետություն-մասնավոր հատված համագործակցությամբ: Հիմա գտնվում ենք նվիրատվությունն ընդունելու իրավական գործընթացում: Շինարարական աշխատանքների ավարտին կունենանք բազմակողմանի համալիր, որը կներառի թե՛ գորգի թանգարանը, թե՛ ժամանակակից արվեստի կենտրոնը, որտեղ նաեւ մեր արվեստագետները հնարավորություն կունենան տարբեր ծրագրեր իրականացնելու, ինչպես նաեւ կստեղծվի ժողովրդական արհեստների ներկայացման միջավայր»:

Ժաննա Անդրեասյանի դիտարկմամբ՝ առանձնակի կարեւոր է նաեւ թանգարանային համալիրի տեղադիրքը՝ որպես զբոսաշրջային ակտիվ երթուղի, ինչը նոր համագործակցությունների, մշակութային ժառանգության եւ ժամանակակից արվեստի ճանաչելիության բարձրացման հնարավորություն է: Նախարարի ընդգծմամբ՝ ամեն ջանք կներդրվի աշխատանքները հնարավորինս արագ ավարտելու եւ թանգարանի դռները օր առաջ լայն հանրության առջեւ բացելու նպատակով:

Նախաձեռնությունը հնարավորություն կստեղծի ձեւավորելու հայկական գորգարվեստին եւ մշակութային արժեք ներկայացնող առարկաներին նվիրված նոր մշակութային կենտրոն: Այն կծառայի ոչ միայն որպես թանգարան, այլեւ որպես կրթամշակութային հարթակ, որտեղ կիրականացվեն թեմատիկ ցուցադրություններ, վարպետաց դասեր, կրթական ծրագրեր եւ այլ մշակութային միջոցառումներ: ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը կապահովի թանգարանի մասնագիտական եւ կազմակերպչական կայացումը՝ ներգրավելով անհրաժեշտ մասնագիտական ներուժ, ապահովելով հավաքածուների պատշաճ պահպանումը եւ թանգարանի արդյունավետ գործունեությունը:

Նոր թանգարանի ստեղծումը կնպաստի հայկական գորգարվեստի հարուստ ժառանգության պահպանությանը, ուսումնասիրմանը եւ հանրահռչակմանը՝ ապահովելով դրա փոխանցումը հաջորդ սերունդներին:

ԱԱ-2026

ԱՄՆ-ում, Կանադայում եւ Մեքսիկայում ընթացող Ֆուտբոլի աշխարհի 2026 թվականի առաջնությունում ավարտվեցին D խմբի վերջին՝ երրորդ տուրի հանդիպումները, որոնք աչքի ընկան դրամատիկ սցենարներով եւ դատական արդյունքներով, գրում է armsport-ը:

Լոս Անջելեսում կայացած խաղում Թուրքիայի հավաքականը 3:2 հաշվով կամային հաղթանակ կորզեց ԱՄՆ-ի ընտրանուց: Հանդիպումը մեկնարկեց խելահեղ տեմպով. արդեն 3-րդ րոպեին ամերիկացի պաշտպան Օսթոն Թրասթին բացեց հաշիվը: Թուրքերին պահանջվեց ընդամենը յոթ րոպե հավասարությունը վերականգնելու համար. աչքի ընկավ Արդա Գյուլերը: 31-րդ րոպեին Բարիշ Յըլմազի խփած գոլի շնորհիվ Թուրքիան առաջ անցավ հաշվի մեջ, սակայն երկրորդ խաղակեսի մեկնարկում՝ 49-րդ րոպեին, ԱՄՆ-ի կիսապաշտպան Սեբաստիան Բերհալթերը վերականգնեց հաշվի հավասարությունը՝ 2:2:

Խաղի վերջակետը դրվեց մրցավարի կողմից ավելացված ժամանակում: 90+8-րդ րոպեին Կաան Այհանը հաղթանակ պարգեւեց Թուրքիային, որը, սակայն, մրցաշարային աղյուսակում ոչինչ չփոխեց:

Չնայած պարտությանը, Մաուրիսիո Պոչետինոյի գլխավորած ԱՄՆ-ի հավաքականը վաստակեց 6 միավոր եւ զբաղեցրեց առաջին հորիզոնականը: 1/16 եզրափակիչում ամերիկացիները կմրցեն Բոսնիա եւ Հերցեգովինայի հավաքականի հետ: Թուրքիան 3 միավորով եզրափակեց քառյակը եւ հրաժեշտ տվեց Աշխարհի առաջնությանը:

Ջուգահեռաբար Սանտա Կլարայի «Լեւայս» ստադիոնում ուժերն էին չափում Ավստրալիայի եւ Պարագվայի հավաքականները: Այս հանդիպումն ավարտվեց գոլազուրկ ոչ-ոքիով:

Վիճակագրության համաձայն՝ ավստրալացիները 5 անգամ են հարվածել դարպասի ուղղությամբ, մինչդեռ հարավամերիկացիները՝ ընդամենը 2: Հանդիպման լավագույն ֆուտբոլիստ է ճանաչվել Ավստրալիայի կիսապաշտպան Էյդեն Օ'Նիլը:

Այս ոչ-ոքին Ավստրալիայի հավաքականին պատմական արդյունք ապահովեց: Թիմը վաստակեց 4 միավոր եւ լրացուցիչ ցուցանիշներով շրջանցելով Պարագվային՝ զբաղեցրեց 2-րդ հորիզոնականն ու դուրս եկավ փլեյ-օֆֆ: Ավստրալիան իր պատմության մեջ առաջին անգամ երկու Աշխարհի առաջնություններում անընդմեջ դուրս է գալիս փլեյ-օֆֆ (ԱԱ-2022-ում թիմը հասել էր 1/8 եզրափակիչ, որտեղ 1:2 հաշվով զիջել էր ապագա չեմպիոն Արգենտինային):

ԱԱ-2026-ի 1/16 եզրափակիչում Ավստրալիան կմրցի G խմբում երկրորդ տեղը զբաղեցրած թիմի հետ: Պարագվայը 4 միավորով հանգրվանեց երրորդ հորիզոնականում:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԴԵՌ ՖՈՒՏԲՈԼՈՒՄ Է

59-ամյա Միուրան կխաղա եւս մեկ մրցաշրջան: Կազույոշի Միուրան կանցկացնի իր 42-րդ մրցաշրջանը որպես պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ, հայտնում է armsport-ը: «Ֆուկուսիմա Յունայթեդը», որը հանդես է գալիս Ճապոնիայի երրորդ լիգայում հայտարարել է 59-ամյա ֆուտբոլիստի վարձակալության պայմանագրի երկարաձգման մասին. Միուրայի տրանսֆերային իրավունքները պատկանում են «Յոկոհամա» ակումբին: «Ես որոշել եմ երկարաձգել պայմանագիրս: Ես կանեմ ամեն ինչ, որպեսզի օգնեմ «Ֆուկուսիմային» դուրս գալ բարձրագույն լիգա: Այսպիսով, ես կշարունակեմ ֆուտբոլ խաղալ նույնիսկ 60 տարեկանում»,- ասել է Միուրան: Պայմանագիրը ուժի մեջ է մինչեւ հաջորդ տարվա հունիսի 30-ը: Անցյալ մրցաշրջանում Կազույոշին մասնակցել է վեց հանդիպման:

«Թագավոր Կաձյուն»՝ Միուրան, պրոֆեսիոնալ մակարդակով ֆուտբոլ է խաղացել 5 տարբեր տասնամյակներում՝ 1980-ականներին, 1990-ականներին, 2000-ականներին, 10-ականներին եւ 20-ականներին: Ճապոնացի հարձակվողի տպավորիչ ուղին սկսվել է դեռեւս 1986 թվականին: Տասնամյակների ընթացքում նա հասցրել է խաղալ աշխարհի տարբեր մայրցամաքներում եւ հայտնի ակումբներում, որոնց թվում են բրազիլական «Սանտոսը», իտալական «Ջենոան», ավստրալական «Սիդնեյը», խորվաթական «Դինամո Զագրեբը»: Ճապոնիայի ազգային հավաքականի կազմում Միուրան անցկացրել է 89 հանդիպում եւ դարձել 55 գոլի հեղինակ՝ մնալով երկրի ֆուտբոլային պատմության լեգենդներից մեկը:

ԿԱՍԵՑՐԵԼ Է

ՖԻՖԱ-ն դադարեցրել է Նեպալի ֆուտբոլի ասոցիացիայի (ANFA) անդամակցությունը՝ ազգային հավաքականին եւ երկրի ակումբներին զրկելով միջազգային մրցաշարերին մասնակցելու իրավունքից: Այս մասին հայտնում է The Himalayan Times-ը, գրում է armsport-ը: Որոշման պատճառը, ըստ ՖԻՖԱ-ի գլխավոր քարտուղար Մաթիաս Գրաֆստրյոմի նամակի, ազգային սպորտի խորհրդի (NSC) կողմից կազմակերպության կանոնադրության կոպիտ խախտումն է, ինչպես նաեւ կողմերի միջեւ չլուծված տարաձայնությունները ANFA-ի ընտրական գործընթացի եւ երրորդ կողմի միջամտության վերաբերյալ: Անդամակցության կասեցման հետեւանքով ANFA-ն կորցնում է ՖԻՖԱ-ի անդամի բոլոր իրավունքները: Ասոցիացիան եւ նրա ներկայացուցիչներն այլեւս չեն կարող մասնակցել ՖԻՖԱ-ի եւ Ասիայի ֆուտբոլի կոնֆեդերացիայի (AFC) զարգացման ծրագրերին, դասընթացներին ու մարզումներին: ՖԻՖԱ-ն ներկայացրել է անդամակցության վերականգնման երկու պայման. առաջինը՝ ամբողջությամբ չեղարկել NSC-ի մարտի 25-ի որոշումը, որով երեք ամսով կասեցվել էր ANFA-ի գործադիր կոմիտեի գործունեությունը, երկրորդը՝ թույլ տալ ասոցիացիային ավարտել արդեն մեկնարկած ընտրական գործընթացը՝ սեփական կանոնադրությանը համապատասխան: ՖԻՖԱ-ն նշել է, որ սահմանված պատժամիջոցները կմնան ուժի մեջ մինչեւ հետագա ծանուցումը:

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում հուլիսի 4-ն՝ ժամը 12:00-ին, կկայանա «Վիննի Փուհ արջուկը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Սպառողների ո՞ր խմբերը կարող են օգտվել էլեկտրաէներգիայի սուբսիդավորումից:

Գոհար Գասպարյան, 67 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ կառավարության 2015թ. հոկտեմբերի 29-ի 1269-Ն որոշմամբ սահմանվել է, որ. «2015 թվականի օգոստոսի 1-ից մինչեւ 2016 թվականի հուլիսի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն ու «Տաշիր» բարեգործական հիմնադրամը (համաձայնությամբ, յուրաքանչյուրը հավասար չափով)՝ սույն կետում նշված սպառողների օգտին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը կվճարեն էլեկտրական էներգիայի՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված սակագները մեղմացնելու համար տրամադրվող սուբսիդիաներ՝ հետեւյալ չափերով.

1) 2015 թվականի օգոստոսի 1-ից մինչեւ սեպտեմբերի 30-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար՝ 0,38 կՎ եւ ցածր լարմամբ սնվող բնակիչ սպառողների համար՝ ամսական սպառած ամբողջ էլեկտրական էներգիայի համար, եւ 2015 թվականի հոկտեմբերի 1-ից մինչեւ 2016 թվականի հուլիսի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար՝ 0,38 կՎ եւ ցածր լարմամբ սնվող՝ ամսական մինչեւ 250 կՎտժ սպառում ունեցող բնակիչ սպառողների համար՝

ա. ցերեկային 48,78 դրամ/կՎտժ (ներառյալ ավելացված արժեքի հարկը) սակագնից՝ 6,93 դրամ/կՎտժ սուբսիդիա (ներառյալ ավելացված արժեքի հարկը),

բ. գիշերային 38,78 դրամ/կՎտժ (ներառյալ ավելացված արժեքի հարկը) սակագնից՝ 6,93 դրամ/կՎտժ սուբսիդիա (ներառյալ ավելացված արժեքի հարկը).

2) 2015 թվականի օգոստոսի 1-ից մինչեւ 2016 թվականի հուլիսի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար՝ 0,38 կՎ եւ ցածր լարմամբ սնվող՝ սպառման յուրաքանչյուր առանձին համակարգում (էլեկտրական էներգիայի մատակարարման յուրաքանչյուր առանձին պայմանագրով) ամսական մինչեւ 500 կՎտժ էլեկտրական էներգիայի սպառում ունեցող սպառողների (բացառությամբ բնակչության) այդպիսի յուրաքանչյուր առանձին համակարգում՝ ամսական մինչեւ 250 կՎտժ էլեկտրական էներգիայի սպառման համար

ա. ցերեկային 48,78 դրամ/կՎտժ (ներառյալ ավելացված արժեքի հարկը) սակագնից՝ 6,93 դրամ/կՎտժ սուբսիդիա (ներառյալ ավելացված արժեքի հարկը),

բ. գիշերային 38,78 դրամ/կՎտժ (ներառյալ ավելացված արժեքի հարկը) սակագնից՝ 6,93 դրամ/կՎտժ սուբսիդիա (ներառյալ ավելացված արժեքի հարկը)»:

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարություն

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպիսի՞ իրավական գործիքներ են առկա շահերի բախման իրավիճակները զսպելու կամ կառավարելու համար:

Մարինե Ջաքարյան, 54 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Շահերի կառավարման իրավական մեխանիզմները գտնվում են շարունակական եւ պարբերական բարելավման գործընթացում: Այդուհանդերձ, գործող իրավակարգավորումներն արդեն իսկ հնարավորություն են տալիս կառավարելի դարձնել դրանք՝ խուսափելու, հայտնելու, լուծելու կառուցակարգերի միջոցով: «Հանրային ծառայության մասին» օրենքը պաշտոն զբաղեցնող անձանց, որպես կանխարգելման մեթոդ, նախ եւ առաջ առաջարկում է ձեռնպահ մնալ շահերի բախման իրավիճակում գործողություն (անգործություն) կատարելուց կամ որոշում ընդունելուց, այդ թվում՝ որոշման ընդունման նախապատրաստական աշխատանքներին մասնակցելուց: Միաժամանակ, նախատեսվում են առանձնահատուկ կարգավորումներ վերադաս կամ անմիջական ղեկավար ունեցող անձանց եւ այդպիսիք չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց համար: Կարգավորումների հիմնական տրամաբանությունն առաջին դեպքում ենթադրում է շահերի բախման մասին վերադաս անձին հայտնելու պարտավորություն, ով առաջարկում է իրավիճակի լուծմանն ուղղված որոշակի քայլեր: Մինչդեռ, վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող անձանց եւ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց օրենքը հնարավորություն է տալիս խորհրդատվություն ստանալու նպատակով դիմել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Երեւանում «Hyundai Elantra»-ն բախվել է «Հրազդան» մարզադաշտի մուտքի բազալտե պատնեշին. 28-ամյա վարորդը հիվանդանոցում մահացել է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 7 + 12 + 20 + 25
Կոտայքի լեռներ	+ 6 + 10 + 20 + 24
Կոտայքի նախալեռներ	+ 12 + 15 + 25 + 28
Գեղարքունիք	+ 7 + 11 + 18 + 22
Լոռի	+ 7 + 12 + 22 + 25
Տավուշ	+ 8 + 12 + 22 + 25
Արագածոտնի լեռներ	+ 5 + 10 + 19 + 23
Արագածոտնի նախալեռներ	+ 11 + 16 + 24 + 29

Արարատ	+ 14 + 17 + 28 + 30
Արմավիր	+ 16 + 19 + 29 + 32
Վայոց ձորի լեռներ	+ 6 + 10 + 18 + 22
Վայոց ձորի նախալեռներ	+ 15 + 19 + 29 + 32
Սյունիքի լեռներ	+ 6 + 10 + 18 + 21
Սյունիքի նախալեռներ	+ 12 + 15 + 22 + 25
Սյունիքի հովիտներ	+ 17 + 21 + 29 + 32
Երեւան	+ 17 + 19 + 27 + 29

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **26.06.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*